

**ՀՀ ԳԱԱ հայագիտական հետազոտությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարան» (այսուհետ՝ ԱԱՀԹԳ) ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքի հաշվետվություն.**

**ղեկավար՝ պ.գ.դ. Ազատ Բոգոյան**

**(2020 ապրիլ, մայիս, հունիս)**

Ստորև ներկայացվում է ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները.

1/ Թվային գրադարանի ստեղծման աշխատանքներին մասնակցել են ղեկավար, պ. գ. թ. Ա. Բոգոյանը համակարգող-մասնագետ պ. գ. թ. Գ. Մարգարյանը, օպերատոր-մասնագետներ Ա. Ավետիսյանը և Է. Ղազարյանը, և օպերատոր Ե. Մելքոնյանը:

2/ Պատրաստվել է **համագործակցության հուշագիր** ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի միջև, որը առաջիկա օրերին կստորագրվի երկու ինստիտուտների տնօրենների կողմից:

3/ Այս ամիսների ընթացքում Արևելյան աղբյուրագիտության թվային գրադարանի շտեմարան մուտքագրվել է այլալեզու բազմաբովանդակ գրականություն, որոնք մասնավորապես վերաբերվել են արևելյան աղբյուրագիտությանը (վրաց, հայ, օսմանյան, պարսկական եւ այլն)՝ պատմություն, պատմագրություն, գրականություն, լեզվաբանություն, դրամագիտություն, բառարանագրություն եւ այլն, Շուրջ՝ 450 միավոր:

4/ Չնայած համավարակի առաջացրած բարդություններին՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ հաճախելու դժվարությամբ պայմանավորված, գործարկվել է A3 չափի գրքերի սկանավորման համար ձեռք բերված սկաները, որով Ե. Մելքոնյանի, Գ. Մարգարյանի և Ա. Բոգոյանի կողմից թվայնացվել են մեկ տասնյակից ավելի գրքեր (շուրջ 5000 էջ), ինչպես նաև շուրջ 3000 էջ A4 սկաներով:

5/ Օսմանագետ **Ա. Ավետիսյանը** ծրագրի շրջանակում ընթացիկ տարվա ապրիլ-մայիս-հունիս ամիսների ընթացքում Արևելյան աղբյուրագիտության թվային գրադարանի շտեմարան մուտքագրել է շուրջ 150 միավոր գրականություն:

Այս մուտքագրված նյութերի մեջ ընդգրկվել ենք շուրջ 20 անուն հոդված, որոնք առնչվել են Հայոց Ցեղասպանությանը եւ նույն ճակատագրին արժանացած ժողովուրդների նկատմամբ տեղի ունեցած վայրագություններին առնչվող հայ եւ օտար (նաեւ ազգությամբ թուրք) հեղինակների նյութերը, հարցազրույցները՝ հրապարակված կամ թարգմանված անգլերեն, ֆրանսերեն:

Ընդգրկված աշխատությունների, առանձին պատմագրական երկերի, հոդվածների, աղբյուրագիտական գիտաժողովների նյութերի հրապարակում-ժողովածուների, հանրագիտարանային նշանակության աշխատությունների, բառարանների եւ այլնի լեզուներն են՝ հայերեն, օսմաներեն, թուրքերեն, պարսկերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, վրացերեն:

**Ստորեւ մուտքագրված գրականության որոշ նմուշ-օրինակների սեղմ թվարկում.**

**Boris Adjemian and Mikael Nichanian**, "Rethinking the "Hamidian massacres": the issue of the precedent"; **Ali Sipahi**, "Narrative Construction in the 1895 Massacres in Harput: The Coming and Disappearance of the Kurds"; **Edip Gölbaşı**, "The Official Conceptualization of the anti-Armenian Riots of 1895-1897 (Bureaucratic Terminology, Official Ottoman Narrative, and Discourses of Revolutionary Provocation)"; **Selim Deringil, Boris Adjemian and Mikael Nichanian**, "Mass Violence in the Late Ottoman Empire: A Discussion An Interview with Selim Deringil"; **Пармен Закарая**, Древние Крепости Грузии, Тбилиси, 1969 г.; **Вахтанг Челидзе**, "Исторические Хроники Грузии XI-XII", Тбилиси, 1988 г. ; **А. В. Акопян**, "Двин в начале XI-хачале XII в. и новые материалы о его денежном обращении"; **А. В. Акопян**, "К шаддадидской нумизматике: чекан Искандара б. Шавура, правителя Двина"; **Кэролайн Финкель**, История Османской империи. Видение Османа, Серия «Страницы истории (АСТ)»; **Հակոբ Մանանդյան**, Նյութեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, Հ. 1, Երեւան, 1927 թ.; **محمد اقبال** "اخبار الدولة السلجوقية" 1933, لاهور; **Ezgi Aslan**, "Türkçede Bati Kökenli Kelimeler Sözlüğü Üzerine ", *Uluslararası Türkçe Edebiyat Kültür Eğitim Dergisi Sayı: 5/1 2016 s. 534-544, Türkiye*; **A General History of the Turks, Moguls, and Tartars, Vulgarly called Tartars. Together with a Description of the Countries they inhabit (In Two Volumes)**, London, M. DCC.XXX; **Гарольд Шмальцель и Гиви Нозадзе**, Грузинско-азербайджанско-армянско-русский частотный словарь, Тбилиси, 2012; **Michael M. Gunter**, Historical Dictionary of the Kurds, Oxford, 2004; **J.B. Van Loon** , Ta'rikh-i Shaikh Uwais (History of Shaikh Uwais) An important Sours for the History of Adharbaijan in the Fourteenth Century եւ այլն:

6/ Ծրագրի շրջանակում վերոնշյալ ամիսների ընթացքում իրանագետ **Է. Ղազարյանը** Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարանի շտեմարանը համալրել է շուրջ 150 միավոր գրականությամբ:

Այս ամիսների ընթացքում Արևելյան աղբյուրագիտության թվային գրադարանի շտեմարանը հարստացել է տարաբնույթ և տարալեզու գրականությամբ, որոնք վերաբերում են մասնավորապես՝ արևելյան աղբյուրագիտությանը, պատմությանն ու լեզվաբանությանը (*այդ թվում՝ թարգմանություններ, խմբագրություններ, հետազոտություններ, հատորաշարեր*): Հարկ է ընդգծել, որ մուտքագրված միավորների շարքում այս անգամ գերակշիռ թիվ են կազմում հատկապես հայ պատմագրությանն առնչվող նյութերը:

Ստորև ներկայացված են վերոնշյալ ամիսների ընթացքում թվային գրա-դարանի շտեմարան մեր կողմից մուտքագրված միավորներից որոշ նմուշ-օրինակ- ներ (հեղինակ, աշխատության վերնագիր):

- Արշաւանք արաբաց ի Հայս, **Արաբեալ Ղեւոնդ Վարդապետի Հայոց**, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք **Կարապետ Վարդապետ Շահնազարենաց**, Փարիզ, 1857
- Տիեզերական Պատմութիին **Ստեփանոս Վարդապետի Տարօնեցիոյ**, Ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք **Կարապետ Վարդապետ Շահնազարեան**
- **Ագաթանգեղոս**, Պատմութիին Հայոց, Ի Վենետիկ , 1835
- Բացատրութիին Չափուց եւ Կշռոց նախնեաց, Առաջնորդութեամբ Եպիփանու Խորենացիոյ Եւ Շիրակացիոյ, Ի Վենետիկ, 1821
- Ճանապարհորդութիին ի Մեծն Հայաստան, Մասն Ա, Աշխատասիրութեամբ **Սարգիս Վարդապետի Ջալալեանց**, Տիփսիս, 1842
- Հեթում Պատմիչ Թաթարաց, Յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ ի ձեռն Հ. Մկրտիչ Աթոռակալ Վարդապետի Աւգերեան, Վենետիկ, 1842
- ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն Բ (1451-1480), **կազմեց Լ. Ս. Խաչիկյան**, Երևան. 1958
- Մանր ժամանակագրություններ XIII-XVIIIդդ. , հատոր 2, **կազմեց Վ. Ա. Հակոբյանը**
- Մեծին Վարդանայ Բարձրբերդեցիոյ Պատմութիին Տիեզերական, Ի **Լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին**, Սոսկվա, 1861
- Քերականութիին գրաբառ լեզուիս հայոց, Հատոր Ա, ի Սոսկով, 1827
- Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիին, Ադամից մինչև 1776, **Աշխատասիրու- թեամբ Կարեն Սաթեղոսյանի**, Երևան, 2014
- *The Mythology of all Races*, **CANON JOHN ARNOTT MACCULLOCH, D.D., EDITOR GEORGE FOOT MOORE, A.M., D.D., LL.D., CONSULTING EDITOR**, Boston, 1925
- *The Armenian ritual, Part II*, **F. JAIMES Dr. ISSA VERDENZ**, Venice, 1873
- **DUTCH STUDIES IN ARMENIAN LANGUAGE AND LITERATURE 6, The Lawcode [Datastanagirk \*] of Mxit'ar Gos**, *Translated with Commentary and Indices by Robert W. Thomson*, Amsterdam, 2000
- **Tabakat- I- Nasiri: A general history of the Muhammadan dynasties of Asia, including Hindustan, Volume 1** Maulana, Minhaj-ud-Din, Abu-Umar-I-Usman, *Translated from original Persian manuscripts by Major H. G. RaVerty*.

7/ արաբագետ, ծրագրի համակարգող-օպերատոր **Գ. Մարգարյանը** Հաշվետու ժամանակահատվածում մուտքագրել է ԺԵ դարի «տիեզերական պատմություն» շարադրած Մումամմադ իբն Խվանդշահի՝ Միրխոնդի հեղինակած կարևորագույն պարսկական աղբյուրը՝ «Ռաուզաթ աս-Սաֆա» (Rauzât-us-safâ) երկհատորյակը, Կիրիլ Թումանովի՝ քրիստոնեական միջնադարյան հարստությունների անվանացանկերի վերաբերյալ կոթողային աշխատանքը, ֆրանսիացի մերօրյա արևելագետների՝ Դ. Էգլ, Ֆ. Լուիգետտո և այլոց աշխատությունները և հետազոտությունները: Հարկ է ընդգծել, որ նշյալ պարսկական աղբյուրը և այս հետազոտությունները թվային հասանելիությամբ առաջինն են հայկական էլեկտրոնային գրադարանների տիրույթում:

Բացի այդ, հաշվետու ժամանակահատվածում մեր կողմից հավաքագրվել, թվայնացվել և խմբի կատարողներ Է. Ղազարյանին ու Ա. Ավետիսյանին է փոխանցվել 186 կտոր գրականություն (հայկական, արա-պարսկական, վրացական սկզբնաղբյուրներ, ֆրանսիացի արևելագետների հետազոտություններ, հոդվածների ժողովածուներ և այլն), որոնք արդեն իսկ մուտքագրված են: Բացի այդ, մուտքագրման համար պատրաստվել է 300 կտորից բաղկացած հինարևելյան աղբյուրների և հետազոտությունների էլեկտրոնային փաթեթ, որը մուտքագրվելու է հետագա ամիսների ընթացքում:

8/ Ծրագրի կատարողներ **Գ. Մարգարյանի** և **Եկատերինա Մելքոնյանի** կողմից սկանավորվել և թվայնացվել է հետևյալ գրականությունը՝ մոտ 4000 էջ

- روضةالصفاء، محمدبن خاوندشاه بلخی، تهذيب وتلخيص دکتر عباس زریاب، ٢ مجلد، تهران ١٣٧٣
- Մումամմադ իբն Խվանդշահ, «Ռաուզաթ աս-Սաֆա», երկու հատորով, 2439 էջ:
- Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la Caucasic chrétienne : Arménie, Géorgie, Albanie / Cyrille Toumanoff, 630 ջէ
- Э. В. Кугришева, История армян в Астрахани, Астрахань, 2007, 288 էջ
- Aigle Denise, Le Fârs sous la domination mongole. Politique et fiscalité (xiiiie-xive s.), Cahiers de Studia iranica, 31, Paris, 2005, 246 էջ
- Luisetto, Frederic, Armeniens et autres chretiens d'orient sous la domination mongole: L'Ilkhanat de Ghazan 1295-1304, Paris: Geuthner, 2007, 262 էջ
- Aigle Denise, La Correspondance Entre Souverains, Princes Et Cites-Etats, Aigle: Approches Croisees Entre L'Orient Musulman, L'Occident Latin Et Byzance (Xiiiie-Debut Xvie S.), 240 էջ:
- ՆՈՆԱՅԱՐՈ, ԺԾՈԼՈՅՈ, 2015, 1100 էջ:

9/ Ծրագրի ղեկավար **Ա. Բոգոյանը** իր գիտական աշխատանքի ընթացքում հավաքել է շուրջ 50 հետազոտության PDF պատճեններ (շուրջ 20000 էջ) Բյուզանդագիտության, միջնադարագիտության, խաչակրաց արշավանքների հետազոտության բնագավառներից:

10/ Ծրագրի կատարող ծրագրավորող մասնագետ **Ս. Հունանյանի** կողմից իրականացվում են թվային գրադարանի **նոր կայքէջի ստեղծման**, բարելավման, էլեկտրոնային նոր հարթակի մշակման, սերվերային ծավալի ընդլայնման, նոր

**Եվրոպական (լեհական)** գրադարանային ֆոնդի սերվերային պահուստին միանալու, թվային տարբեր ֆորմատներով կայքէջում գրականության մուտքագրման և հասանելիության ապահովման աշխատանքներ: Աշխատանքները դեռևս ընթացիկ փուլում են և ավարտին են հասցվելու հաջորդ եռամսյակի առաջին ամսվա ընթացքում:

11/ ՀԱԱԹԳ կայքէջում բաց մատչելիությամբ արևելագիտական աղբյուրների և նոր հետազոտությունների թվային տարբերակները ձեռք բերելու, բաժանորդագրվելու համար Նամակագրական բանակցություններ են իրականացվում BNF, Persée, Jstor.org, Litres, Hathitrust, googlebooks.com և այլ թվային հայտնի գրադարանների հետ, սկսվել է, որ աշխատանքների կատարման հաջորդ եռամսյակում արդեն իսկ ձեռք բերված կլինեն համապատասխան պայմանավորվածությունները և բաժանորդագրությունները:

12/ Սկսվել է ակադեմիկոս Ն. Մառի գրքերի սկանավորումը:

Թեմայի ղեկավարն՝

պ. գ. դ. Ա. Բոգոյան

29. 06. 2020 թ.

### **Հաշվետվություն**

#### ***«Արցախի ազատագրված տարածքների ամրոցների հետազոտություն» թեմայի 2020 թ. երկրորդ եռամսյակում կատարված աշխատանքների***

2020 թ. երկրորդ եռամսյակում թեման կատարող գիտահետազոտական խումբը ակամայից հայտնվել էր ծանր կացության մեջ: Երկրում համավարակի սահմանափակումներով պայմանավորված փակված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մուտքը Արցախի Հանրապետություն և մեր դիմումները Արցախի պատկան մարմիններին ցանկալի արդյունքի չբերեցին: Ուստի, 2020 թ. երկրորդ եռամսյակի համար նախատեսված մեր բոլոր ծրագրերը ստիպված վերանայվեցին: Որոշվեց նույնանման հետազոտություններ կատարել ՀՀ տարածքում: Փորձ արվեց հետազոտել Արցախի Հանրապետության մեջ մտնող, ծովի մակերևույթից 2700-3100 մ բարձրության վրա գտնվող Ալ և Այլադ լճերի տարածքները, ուր առանց սահմանափակումների կարելի է մտնել Վարդենիսի և Սիսիանի տարածաշրջաններից: Պետք է ասել, որ նշված բարձր լեռնային մարգագետինները մշտապես օգտագործվել են որպես ամառանոցային արոտավայրեր և հնագիտական հետախուզման գրեթե չեն ենթարկվել:

ՀՀ Արագածոտնի, Կոտայքի և Գեղարունիքի մարզերում կատարված դաշտային հետախուզական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեցին մինչ օրս չփաստագրված

հինգ ամրոցներ և բրոնզ-երկաթեդարյան թաղման 12 աշտարակներ, որոնք օղալուսանկարահանվեցին՝ տեղահանությունը, հատակագծեր և եռաչափ պատկերները ստանալու համար:

Շատ ավելի ծանր էր բարձր լեռնային տարածքների հետազոտությունը: Այլ լճերի մոտ հայտնաբերվեց մոտ մեկ կմ երկարությամբ ձգվող պարսպապատ, իսկ Այլաղ լճի մոտ՝ մենհիրներով շրջագծված դամբարան-սրբատեղի: Ցավոք, եղանակային պայմաններից ելնելով մեր այցելությունները նշված տարածքներ արդյունավետ չստացվեցին, քանի որ այստեղ հնարավոր է աշխատել միայն հուլիս-օգոստոս ամիսներին:

Հաշվետու ժամանակաշրջանում խմբի մասնագետները ավելի վարժվեցին եռաչափ պատկերներ ստանալու գործում, իսկ պատրաստի օրինակները հասնելի են համացանցում (Հանդաբերդի ամրոց, Վանոցայի հուշարձանախմբեր):

«Արցախի ազատագրված տարածքների

հուշարձանների հետազոտություն» թեմայի ղեկավար՝

Գ. Սարգսյան

29. 06. 2020

## **ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՐԴԻ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ»**

**ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ 2020Թ. ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ  
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խումբը՝ հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է մի շարք ուսումնասիրություններ նվիրված Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ նաև՝ ՀՀ) տիրող սահմանադրաիրավական հիմնախնդիրներին խորհրդարանական կառավարման համակարգում: Մասնավորապես, կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ ՀՀ-ում խորհրդարանական կառավարման մոդելի շրջանակներում կտրուկ նվազել են ՀՀ նախագահի լիազարությունները և ավելացել ինչպես ՀՀ Վարչապետի, այնպես էլ ՀՀ Ազգային ժողովի լիազարությունների շրջանակը: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության «Օրենքի ստորագրումը և հրապարակումը» խորագրով հոդված 129-ի համաձայն, Ազգային ժողովի ընդունած

օրենքը Հանրապետության նախագահին ստորագրում և հրապարակում է քսանմեկօրյա ժամկետում կամ նույն ժամկետում դիմում է Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանն օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով: Եթե Սահմանադրական դատարանը որոշում է, որ օրենքը համապատասխանում է Սահմանադրությանը, ապա Հանրապետության նախագահը հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը: Եթե Հանրապետության նախագահը չի կատարում սույն հոդվածով սահմանված պահանջները, ապա Ազգային ժողովի նախագահը հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը: Հարկ է նշել, որ 2005թ. նոյեմբերի 27-ի ՀՀ Սահմանադրության փոփոխությունների համաձայն (հոդվ. 55) ՀՀ Նախագահը, Ազգային ժողովի ընդունած օրենքը ստանալուց հետո քսանմեկօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է այն: Դրա հետ մեկտեղ, ՀՀ Սահմանադրությունը Հանրապետության Նախագահին իրավունք էր վերապահում նշված ժամկետում օրենքն առարկություններով կամ առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով պահանջելով նոր քննարկում: Այդ պարագայում, Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի վերադարձրած օրենքը քննարկում էր արտահերթ, իսկ Հանրապետության Նախագահի առարկությունները և առաջարկությունները չընդունելու դեպքում, Ազգային ժողովը վերադարձրած օրենքը վերստին ընդունում էր պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Հետևաբար, ներկայիս բարեփոխված սահմանադրության արդյունքում, գործ ունենք այնպիսի իրավիճակի հետ, երբ ՀՀ Նախագահի վետոյի իրավունքը փոխարինվել է ոչ լիարժեք կամ քվադի-վետոյի իրավունքով, ինչը մի շարք հարցեր և նոր խնդիրներ է առաջացնում օրենքի սանկցիավորման և լեգիտիմության ապահովման գործընթացում:

Հաշվետու ժամանակաշրջանում գիտական խմբի ուշադրության կիզակետում են գտնվել նաև խնդիրներ կապված ՀՀ Ազգային ժողովի նախագահի և նրա տեղակալների լիզորությունների առանձնահատկություններին:

Հայտնի է, որ ՀՀ Ազգային ժողովի նախագահը ներկայացնում է Ազգային ժողովը և ապահովում նրա բնականոն գործունեությունը: Վերջինիս լիզորություններն իրականացնելիս, նախագահում է Ազգային ժողովի նիստերը, գումարում է Ազգային ժողովի արտահերթ նիստեր և նստաշրջաններ, շրջանառության մեջ է դնում Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված հարցերը և նշանակում է գլխադասային հանձնաժողով, և այլն: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ գիտական խմբի ուշադրության կենտրոնում նաև ներկայիս սահմանադրաիրավական բարեփոխումները, որոնք կապված են օրենսդրական նախաձեռնության իրավունքի, ինչպես նաև օրենքի ստորագրման և հրապարակման փոփոխված գործընթացը: Օրինակ, ՀՀ Ազգային ժողովի նախագահը Հանրապետության նախագահին է ուղարկում Ազգային ժողովի ընդունած օրենքները, ինչպես նաև Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ Ազգային ժողովի որոշումները, ինչպես նաև Սահմանադրության 202-րդ հոդվածի 2-րդ մասով

նախատեսված դեպքում հրապարակում է Ազգային ժողովի ընդունած Սահմանադրության փոփոխությունները:

Կարծում ենք, վերոնշյալ փոփոխությունները բազմակողմանի և համապարփակ գիտագործնական ուսումնասիրությունների կարիք ունեն:

Ուսումնասիրությունների շրջանակներում գիտական խումբը նաև անդրադարձել է ՀՀ Ազգային ժողովի գործունեության համեմատության եվրոպական մի շարք երկրների պառլամենտի գործունեության հետ: Այսպես, կատարված ուսումնասիրությունները վկայում են այն մասին որ, Ֆրանսիայի Հանրապետության խորհրդարանի գործառույթները քիչ են տարբերվում ցանկացած այլ երկրի խորհրդարանի գործառույթներից: Ֆրանսիայի խորհրդարանն ընդունում է երեք տիպի օրենքներ՝ սովորական, օրգանական և Սահմանադրությունը փոփոխող: Ըստ իրավասությունների ծավալի, Ֆրանսիայի խորհրդարանը դասվում է բացարձակ սահմանափակ իրավասությամբ խորհրդարանների թվին: Սահմանադրության 34 հոդվածը սահմանում է այն հարցերի շրջանակը, որոնց առնչությամբ խորհրդարանը կարող է ընդունել օրենքներ: Այդ կարգավորման շրջանակներից դուրս գտնվող բոլոր այլ ոլորտների կարգավորումը վերապահված է կառավարությանը:

Սովորական օրենքներից բացի, խորհրդարանն ընդունում է նաև օրգանական օրենքներ, որոնց ընդունման համար նախատեսված է հատուկ ընթացակարգ: Նախ, մինչև պալատում օրինագծի քննարկումը պետք է 15-օրյա ժամկետ տրամադրվի խորհրդարանականներին և խմբակցություններին՝ օրինագիծը ուսումնասիրելու և իրենց դիրքորոշումները հայտնելու համար: Երկրորդ, Սենատին առնչվող օրգանական օրենքները պետք է ընդունվեն երկու պալատների կողմից՝ միևնույն խմբագրությամբ: Երրորդ, եթե կառավարությունը կիրառում է խառը պարիտետային հանձնաժողովի ընթացակարգը, ապա օրգանական օրենքը վերջնականապես կարող է ընդունվել Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի բացարձակ մեծամասնությամբ:

Հարկ է նշել, որ հաշվետու ժամանակահատվածում գիտական խմբի անդամները հետազոտվող թեմայի շրջանակներում տպագրության են հանձնել մի շարք գիտական հոդվածներ արտասահմանյան հեղինակավոր ամսագրերում, ինչպես նաև սկսել են աշխատանքներ կոլեկտիվ մենագրության շուրջ:

**ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի**

**և իրավունքի ինստիտուտի գիտական խմբի ղեկավար,  
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**

**Ա.Հ. Խաչատրյան**

**ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի**

**և իրավունքի ինստիտուտի տնօրեն,  
Իրավաբանական գիտությունների թեկնածու**

**Լ.Ա. Ղազանչյան**



## **ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

### **«ՀԱՅՐԱՊԵՏ ԴԻ ՄԱՐՏԻՆԻ ՆԱՄԱԿԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ»**

#### **ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ**

**(ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ - 01.04.2020-30.06.2020)**

Հաշվետու ժամանակահատվածում գիտական ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները կենտրոնացած են եղել հայ վաճառական Հայրապետ դի Մարտինի նամակագրական ժառանգության ուսումնասիրության վրա՝ հայոց պատմության տեսանկյունից: Հետազոտության նախորդ փուլերի ընթացքում նրա նամակների մի մասի վերծանումն ու դրանցում առկա տեղեկությունների խմբավորումը թույլ է տվել անցնելու հաջորդ փուլին՝ դրանց ուսումնասիրությանը՝ Նոր Զուղայի առևտրական ցանցի համապատկերում 17-18-րդ դարերի հայոց պատմության հետևախորքի վրա:

Առանձնակի ուշադրություն է դարձվել այն հարցին, թե Հայրապետ դի Մարտինի առևտրական նամակագրությունն ինչպես կարող է նպաստել հայ վաճառականական նշանավոր ընտանիքների ուսումնասիրության գործին: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աղբյուրագիտական այս հսկայական նյութը հատկապես կարևոր և անգնահատելի կարող է լինել Գերաք Միրմանների ու Վելիջանյանների հայկական ընտանիքների պատմության համար: Հայրապետն ինքը պատկանում էր Վելիջանյանների տոհմին, որի մի ճյուղը, հանձին Հայրապետի հոր՝ Մարտիրոս Վելիջանյանի, 17-րդ դարի կեսերին Նոր Զուղայից տեղափոխվել էր Վենետիկ: Հայրապետի նամակներն օգնում են լույս սփռել այս ընտանիքի պատմության վրա, հատկապես որ առևտրական գործերից զատ նա հազվադեպ չէ, որ իր նամակներում քննարկել է իր ընտանիքի անդամներին վերաբերող հարցեր: Վելիջանյանների մասին առկա տեղեկությունները պատկերում են հայ-իտալական ընտանիքի պատկեր, ինչը խորհրդանշում է վաղ արդի դարաշրջանի հայ վաճառականների կոսմոպոլիտ աշխարհայացքը: Բավական է նշել, որ Մարտիրոս Վելիջանյանը թաղվել է Վենետիկի Chiesa di San Moise իտալական եկեղեցում, իսկ տապանաքարի գրությունը երկլեզու է՝ լատիներեն ու հայերեն:

Հայրապետ դի Մարտինի նամակագրությունն օգտագործվել է նաև Գերաք Միրմանների ընտանիքի ուսումնասիրության համար: Վերջիններս, թեև մնացել են

չուսումնասիրված, սակայն երրորդ նշանավոր ընտանիքն էին Նոր Զուղայում Շահրիմանյաններից ու Մինասյաններից հետո: Հայրապետի նամակները լի են Գերաք Միրմանների մասին տեղեկություններով, քանի որ նա հենց այդ ընտանիքի ներկայացուցիչներից մեկի՝ Զաքարեի կոմենդա գործակալն էր: Բազմաթիվ են հենց Զաքարեին ուղղված նամակները, որոնցում ամփոփված տեղեկությունները թույլ են տալիս ամբողջական պատկերացում կազմել Գերաք Միրմանների առևտրական գործունեության մասին ողջ Միջերկրական ծովի քաղաք-նավահանգիստներում: Գիտական ծրագրի շրջանակներում Գերաք Միրմանների վաճառականական ընտանիքի ուսումնասիրությունն ուղեկցվել է նաև այլ աղբյուրների ընդգրկմամբ, մասնավորապես՝ օգտագործվել են Վենետիկի պետական արխիվի Procuratori di San Marco ֆոնդում պահվող Գերաք Միրմանների stampa գրքերը: Գերաք Միրմանների առևտրական գործունեության ընդգրկումը պատկերացնելու համար բավական է ասել, որ նրանք գործակալներ ունեին ինչպես միջերկրածովյան գրեթե բոլոր նավահանգիստներում, այնպես էլ Հնդկաստանում և նույնիսկ Աֆրիկայում:

17-18-րդ դարերի հայոց պատմության համար Հայրապետ դի Մարտինի նամակագրության կարևորությունն այսքանով, անշուշտ, չի սպառվում: Նրա շուրջ 2000 նամակներում ամբարված տեղեկատվությունն անփոխարինելի նշանակություն ունի նաև 17-րդ դարավերջի-18-րդ դարասկզբի Վենետիկի հայկական համայնքի պատմության լուսաբանման համար: Ուսումնասիրության ընթացքում Հայրապետի նամակների հիման վրա հնարավոր է դարձել պատկերացում կազմել Վենետիկում ապրող հայերի, նրանց համայնքային կյանքի կազմակերպման, դժվարությունների ու մտահոգությունների և այլնի մասին:

Ինչ վերաբերում է ուսումնասիրության արդյունքների հանրայնացմանը, ապա Covid-19-ով պայմանավորված՝ անորոշ ժամկետով հետաձգվել են հիմնական գիտական միջոցառումները, ինչի հետևանքով հնարավոր չի եղել նախապես պլանավորված գիտաժողովների ընթացքում զեկուցումների տեսքով ներկայացնել հետազոտության արդյունքները: Հաշվետու ժամանակաշրջանում հրատարակության է հանձնվել Հայրապետ դի Մարտինի նամակագրական ժառանգության վերաբերյալ 1 գիտական հոդված:

**Ծրագրի կատարող՝**

**Սարգիս Բալդարյան**

